

տիղմն գարշութեանց: Շատերը կան, որ
թէև յեկեղեցի կը կանխեն և հոգևոր խը-
րատներ լսել կցանկան, բայց երբէք չեն
զգալ ճշմարտութեան զիտութիւնը՝ և
ոչ կուզղեն վարքերը: Բազումք կան՝ որ
թէև բազմիցս կը մերձենան Ս. Հաղորդու-
թեան խորհրդական Սարմնոյ և Արեան
Ակնարարին, այլ անարժանութեամբ ա-
ւելի դատապարտութիւն կընդունին քան
թէի փրկութիւն անձանց: Արպիսիք և այլ
բազմապիսիք թէպէտ Վրիստոսի Ակե-
ղեցւոյ և Անդատանի մէջ խիստ շատ
կրնան լինել և կը գտնուին, այլ ցորե-
նով խառնուած որոմներ, և բարեաց
հետ խառնուած չարք կը համարու ն:

Վերխատոսի Սի, Սերբ, Կաթողիկէ և
Լատինական Եկեղեցիէն իրօք և յայտ-
նապէս արտաքոյ կը մնան, և Սրբոց ի հա-
ղորդութենէ անմասն են և կը զրկուին ի
փրկութենէ այն ամենայն անձինք՝ որք են
1) յայտնի կամ՝ զազանի անհատաք, հայ-
հոյիւք, ուրացողք և մոլորեալք. 2) Ընդ-
հանուր Եկեղեցիէն դատապարտուած հե-
րետիկոսներ, որք յամառութեամբ և կա-
մակորութեամբ կուրանան կամ կմերժեն
ի Վերխատոս, յԱռաքելոցն և ի մարդարէից
որոշակի քարոզեալ Հաւատոյ էական
ճշմարտութիւնքը, կը խանդարեն Աստ-
ուածաշունչ զրոյ վարդապետութիւնքը,
և իւրեանց ախորժած և լսելեաց սիրած-
ներուն համաձայն նոր իմն և ինքնահայր
վարդապետութիւնք կը յաւելուն ի կո-
րուստ անձանց և ինքեանց լսողաց և հե-
տեողացն. 3) վերջապէս իւրեանց Օնօղ
և Մայր Եկեղեցւոյ հաւատքէն և վար-
դապետութիւններէն բաժանելով զան-
ձինս մոլորեցողիչներու տատարանօք, և

ևս Վերիստոփ ընդհանուր Եկեղեցւոյ հա-
ղորդութենէն կտրուելով՝ նոր եկեղե-
ցի ձևացուցանող հերձուածողներ և
աղանդաւորներ: Որոց ամենուն և նման-
ներուն ոչ աստ և ոչ ի հանդերձելութիւն
չիք վերկութիւն: (Բ՝ Օրին Գ՝ 2 ԺԲ՝
32: Յայտն. ԻԲ՝ 19: Բ՝ ՏԻմ: Բ՝ 18:
Գաղ. Ե՝ 6—9: Ե՝ Յովհ. Բ՝ 19: Եբբ.
Ժ՝ 25, 31, 39: Բ՝ Պետր. Բ՝ 19, 20,
22):

᠓ ᠤ ᠰ ᠣ ᠣ ᠤ ᠤ

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆՅԻՑ ԱՆՅԵԼՈՑ ՍԵՎԱՆՍԱՅ ՎԱՆՈՒՑ

$$\left(\frac{1}{2} - \frac{1}{2} + \frac{1}{2} - \frac{1}{2} + \frac{1}{2} - \frac{1}{2} \right)$$

9-1-01-10 9-

[illegible]

Հնադրոյն աւանդութեամբ հռչակեալ էր ի բազում տեղիս առ բազում բանաստեղծ անձինս, որպէս և ժողովուրդն մեկնութեան Խոստովութեան և այլոց սրբոց Հարց՝ Սովսէս վարդապետն Երզնկացի ի մեկնութեան Շնորհա՛ Բեշ Կեղիս, յայն բանսն և զխորհուրդն՝ զոր խորհիք՝ խափանէ Տէր. և զբանն զոր խօսիք մի՛ մնասցէ առ ձեզ, և՛ ասէ այսպէս, թէ, դեք և թէ մարդիկ անյագաբար միշտ խոկան ի նենգել. Արպէս և ի Աէվանայ կղզւոյն անցիցն է յայտ. վասնորոյ և զերգս ասի երդել, ի յայտնիլ դաւաճանօղ թշնամեացն և զոր ըստ աւանդութեան պատմեն՝ այսպիսի

սի ինչ է. որպէս թէ՛ Հաղարացի լեռնա-
կան Անգլիք կամ Ալանք լիակով թէ՛
գիւրամուտ ոչ է կարելի լինել չարածոյն
արանց ի կողմն Աէվանու, վասնորոյ իբր
դրացի բարեկամ վաճառական ձեացեալ
միամիտ աղաւնաբարոյ Հարցն ժամանա-
կին, նենդաւոր դարանակալ հնարագի-
տութեամբ, յայնպիսում պահու և ժա-
մանակի, որ և շքապատ բնակիւք յահե-
կուղակաց եկեալ ժողովեալ էին ի կողմն,
գիտելով զտեղին յուսալի ապաստանարան
ի հինից ելուղակաց, որպէս և յայլում
պատահուենս՝ բազմաց է եղեալ պատս-
պարանս Ամին իրի և յայս նուազ ի ժո-
ղովել երկրական գաղթականաց յայս
կողմ, յուսակաւոր եղեալ յիշեալ ելու-
ղակաց, զայս նենդաւոր հնար վաճառա-
կանութեան ի գործ աշկեալ խնդրանք
հաճեցուցանեն զվերակացու կղզեոյս, իբր
թէ զվաճառելի զապրանս նոցին՝ կնքեալ
արկեղօք աւանդ ունին դնել ի վանս.
մինչ ի դադարել մրրկացն աւաղակու-
թեանց. և ըստ վերոգրելոյս միամտու-
թեամբ ընկալեալ զբանս խնդրողացն՝ հա-
ճին վանակայք և առ նոսա բարեբալք
գտանել, թոյլատրեն զի բերցնե զարկեղ
իւրեանց: Արոց աւել քան զքառասուն
մեծամեծ արկեղս, յիւրաքանչիւր արկեղ
երկերիւ գինուորս ամենայն պատրաստու-
թեամբ գինուց ակոյցուցեալք, և միայն
երկուս՝ իբր վերակացուս արկեղացն աղա-
տաքայս ընդ նենդաւոր աւանդիցն եղեալ
առաքեն ի կողմն, զի ըստ նպատչած ժա-
մու գիշերոյն բացեալ զարկեղան, հանեալ
և յոյնց յարկեղաց զընկերս չարութեան
իւրեանց, անհնարին ոճիրն դառնութեան
և արեան ճապաղիս գործեսցեն, թէ՛ ա-

նապատաւորացն՝ և թէ՛ գաղթական ժո-
ղովելոցն:

Բայց անհնարաւորացն արագահաս հը-
նարագիւտ անակնունելի պահուն, անքուն
ակամբ պահպանողն, որ և ոչ թողու ըզ-
գաւաղան մեղաւորաց ի վիճակս արդա-
րոց, զարմանալի հաշադործ դիպուածով
միով մերկեաց զնորամանկ խաբէութիւն
չարահնար թշնամեացն այնոցիկ: Վանդի
վարժապետն ժամանակին, ի գանել զմա-
նուկ մի վասն զաստութեան իւրոյ, որ
ոչ է քաջ սերտեալ, որպէս զայլ ընկերսն,
այս մանուկ առեալ զգիրքն, գնացեալ
մերձ յարկեղաց, իբր առանձին յա՛քոյթ
տեղի, անդ կամր սերտել զգանս իւր:
Եւ ըստ մանկական ուստոստ բնութեան
ձեռս արկեալ ի վակաղաղ և ի կողպական
արկեղն միոյ, խազայր ընդ նմա. յանկարծ
մանուկն լուեալ զոյսպիսի բարբառ յար-
կեղէն, Այ՛ վա՛նք ի՛նչ, յա՛նք. զար-
հուրեալ պատանւոյն, իսկ և իսկ ընա-
ցեալ յոս վարժապետն իւր՝ աղղէ նմա
զայս դիպուած. և նա այլ հարկաւոր ա-
բամբ դան մերձ արկեղացն, ըստ ձեռյ ման-
կանն, և ինքեանք ձեռս արկանեն յայլ
արկեղ միոյ փոփաղաղն, լսեն և ի նմանէ
գնոյն բան, Այ՛ վա՛նք ի՛նչ, յա՛նք:

Եպս կալեալ զիւր վերակացու կայից
զազատաքայլ զերկու անձինսն, յայտ է
թէ, որոց մին էր Ալի, տեղեկացեալ ի նո-
ցանէ, զգալանամբութեանց իշխանի նո-
ցին և զվակնման մասց զաղելոցն յարկեղ-
ան, որք հայէին ի կորուստ բոլոր ի կողմն
պարփակելոց, հոգեորականաց և աշխար-
հականաց, ի միում այնր գիշերի:

Չառաջինն՝ թէպէտ վանականքն կա-
մեցեալ են անարգանք վարել զարան

չարագործս անտի ի կղզոյն, բայց ժողովրդալ գաղթականք՝ անհամաձայն եղեալ վանականացն, որոշեալ են, տանել զբոլոր արկեղան ի գաղթ լերինն, ուր են տաճարք սուրբ Առաքելոցն և Յոհանն ու Կարապետին, և անտի ամալ ի ծովն: Այսն որոյ ըստ նաւաւարացն Յովնանու աւեն, քաւ լեցի մեղ Տէր, մէք անպարտ եմք յարենէ չարահիւթ արանցս այսոցիկ. զի դու Տէր Աստուած բարերար մեր, զիտելով զղարանակալութիւն սոցա առ պաշտօնեայս եկեղեցւոյ քում սրբոյ, և առ հաւատացեալս միասնական Աստուածութեան քում, ուստի իրաւամբ ետուր զթշնամիան մեր ի ձեռս մեր, զի տեսցին և այլ չարասէր թշնամիք մեր և երկիցեն յերեսաց ահաւորիդ, զի դու Տէր յամենայն ժամ ընդ մեզ ես, և իջ երբէք թողուս ի ձեռանէ քումս:

Ապա յօրինեալ միաբան շարցն սրբոյ զհոգեւի խորհրդակուռ զերգս խաղաղականին «ՂԵՆՈՐԷՆԱ՝ ԲԵՂ ՏԵՐԻՆ,՝ զնոյն երգին երգելով բացեալ զարկեղան, բարեօք վերահասու եղեալ և վերադին ամբաստացեալ զնոսին, երգելով և զհեռեալսն. «Աւ զխորհուրդն՝ զոր խորհիք՝ խաւանէ Տէր, զի Աստուած ընդ մեզ է, և զբանըն՝ զոր խօսիք՝ մի՛ մնասցէ առ ձեզ, զի Աստուած ընդ մեզ է, և այլն. որով ամացեալ զարկեղան ի դարէ անտի ի ծովն, որ ըստ խոզիցն տեսանահրաման՝ ամենեքեան խեղդեցան ի ծովակն Պեղամայ ի կղզին Ալեքանու. և յայնմ օրէ նոյն երգ «ՂԵՆՈՐԷՆԱ՝ ԲԵՂ ՏԵՐԻՆ,՝ մնաց յեկեղեցիս մեր, իրր գանձ հարբենի. որով յարտ իսկ է թէ՛ ո՞րքան հոգեբնկալք էին շարցն ժամանակին, որք իսկ և իսկ յօրինամբ

զխորհրդակուռ զերգն զայն՝ փառաւորեցին զտուխն բարութեան իւրեանց, և թողին մեզ ապագայիցս յիշատակ յաւիտենական:

Իսկ զԱլին իւր ընկերաւն ի գաղթման լերինն թաղեալք մերձ Առաքելոց տաճարին, և չար յիշատակ նոցա կայ մինչև ցայսօր յայտնի նշանօք:

Չի թէպէտ առաւել կամ համեմատ ամա՛ նշանք և հրաշագործութիւնք ի դարձ դարս եղեալք են ի խնամոցն Աստուծոյ, բայց կամ հեռաւորութեամբ ժամանակին, կամ յայլ սահմանս զանազան Տէրութեանց, և կամ զանցառութեամբ պատրաստի եղեալ զբասիրաց՝ բազումք մեզ անծանօթ կան մինչև ցայժմ, որպէս և սոյնաման և առաւել հրաշալին ևս ի սոյն կղզի պատահեալն՝ ունիմք պատմել ի տեղւոյ իւրում:

Այժմ ասել զայլ մերձաւորն սոյն ժամանակի, որ ևս ի շարժմանն վնաս սեբ եղեալ է սուրբ Սենարանիս:

ԳԼՈՒԽ Ե

Իսկ ի նորոգութենէ սուրբ Տաճարացս և ի Եկեղեց Նորէն:

Արդ՝ ըստ յայտնութեան հաւատարիմ պատմադրաց, շալատան աշխարհ, որպէս յիլուզակաց նոյնպէս և ի գեանաշարժից՝ մերձ ընդ մերձ կրեալ է զգիրութիւն, զտերութիւն և զամայութիւն. որով և սոյն Ալվան կղզւոյ շինուածքն քանիցս անգամ աւերեալ և աւշբացեալ են. թէպէտե՛ վերադին ի ձեռս բարեսէր շարց և բարեպաշտ ժողովրդոց հեռզհետ ընկալեալ է զվերանորոգութիւն իւր:

Օրի և յաւուրս Միխիթարայ Առաջնորդի և Բարսեղ Արղապետի վերջոսին նորոգութիւն եղեալ է սոյն Անվանու նշանակեալ վանօրէից և սենեկացն, ըստ ցուցանելոյ ի յորմունս եղեալ արձանագրութեանցն (1654. ՌՆՂ): Վանդի Տփխիս քաղաքացի, ի տոհմն Չիթաղեանց, բարեսէր երեք եղբարք, որդիք Թաղայի՝ Սուլուխան, Օալ և Օօհրապ, եկեալ ի սուրբ ուխտս, յաւուրս Փիլիպպոս Աթոռիկոսի, տեսեալ սոցա զաստուածահաճոյ կենակցութեամբ զազգաօգուտ միաբանութիւն երկնաքաղաքացի Հարանցն, և զեսնգարումն շինուածոց, և զանրնչութիւն շնաշխարհայնոց, ջերմեռանդ յօժարութեամբ յարդար վատակոյ իւրեանց ձեռնարկեալ շնեցին վերանորոգմամբ, որպէս զՏաճարն, նոյնպէս և զհարկաւոր յիշատակիսն, զորս ի կարգի յիշատակեացն ունիմք զրել յանուանէ յիշատակաց տուողացն, որքան ստուգելն իցեն կարեորք:

Միայն այս բարեպաշտ Սուլուխան և եղբարքն, ի միում փոքր տեարակի տեւանի՝ թէ զկնի նորոգութեան տաճարացն, այլե զերիս կանթեզս մշտավառս խոտացեալ են թողուլ, և յամ յամ՝ զձէթ կամ զձիթազինսն տալ, այժմ այդ զինք ձիթոյն՝ թէ ոչ ի կայից յիշեալ բարեպաշտ ուխտօղ Չիթաղեանց, բայց ի հաւարակ աստուածապաշտ և բարեսէր ժողովրդոց ժողովն, ոչ թէ երեք, այլե բազում կանթեղք զցայդ և զցերեկ յամենայն ժամերգութիւնս լուցեալ վառին:

Արձանագրութիւնք յանուն սոյն Չիթաղեանց, որք կան յորմունս յիշեալ եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի և Առա

քելոց, բովանդակին ի սոյն միտս, որ ինչ ի վերոյ գրեցան. վասնորոյ և ոչ երկրորդեմք զշարագրութիւն նոցա, զի անյարիբք են և լինի աւելորդ կրկնաբանութիւն:

Բայց դտանին ի վերայ Առաքելոց Տաճարի երկու ընկուղեայ գրունք արեմբտեան և հարաւային կողմանց, որք յոյժ զարմանալի ճարտարապետական նկարուք և հիանալի փորուածովք. իբր քերուր զիտ ասղանի յօրինեալք ի հնագոյն ժամանակաց: Մանաւանդ հարաւային դուռն՝ կարի առաւել ճարտար մտաց և շնորհակերտ ձեռաց ներազութիւնք են, նմին իրի և զնոցին մակագրութիւնսն, որ ի շրջապատ իւրաքանչիւրոցն զլիազրովք գրեալ են ի նոյն ճարտարաց՝ արժան համարիմ՝ աստանօր նոյնութեամբ առաից և բառիցն գրել:

Նախ յարեմտեան դուռն, որ հեագոյն է՝ գրեալ է այսպէս. « Ի թուին Հայոց ՌԱ, նորոգեցաւ դուռն սուրբ եկեղեցւոյս, հրամանաւ Իշխանաց Իշխան Վրդին, և ձեռամբ Զօհաննիսի հիւսանն, որք ընթեկանութք, յիշեալք »:

Հարաւային դուռն արձանագիրն է ի ձեռանաւորի այսպէս. « ԶԱ. թուականին, երեսուն և հինգ թիւ տեղի յԱթոռակալութեան Տեառն Արքայի, ի խաւութեան Աղուպ պէկի, ծաղկեցաւ դուռն Տաճարի, Առաքելոցն Վրիստոսի, հրամանաւ սուրբ վարդապետի, եռամեծիս Վանիկէի, և սիրելի որդւոյ սորին Ապիսկոպոս Տէր Աերսիսի, ձեռամբ սորին աշակերտի՝ անարժանիս Աբրահամի, նաեւ եղբօր մեր սիրելի շնորհօք ի լի Վրիգորի, յոսս անկանիմ ամենայնի, հայցել Տեառնէ պարդե ձրի, բաբունապետիս համայն

ազգի և ծնողացն իւրոց բարի, Կարապետ քահանայի և մօրն Համաւորի, և

Սոքօք տեսանին, թէ՛ արեւմտեան դրան թուականն էրստ Փրկչականին 1176 և հարաւայինն 1552: Յառաջնոյն մինչև ցայժմ՝ յորում եմք 1830 ամի Տեառն՝ անցեալ են 654 և յերկրորդէն 278: Ընալինն ժամանէ յաւուրս Գրիգորիս Կաթուղիկոսի և Կիս Սանուէլ կայսերն: Եւ երկրորդի ժամանակն հասանի՝ Բարսեղ Կաթուղիկոսի Հայոց, (Սմանցւոց տէրութեան Սուլթան Սուլէյմանի, և Պարսիցն Շահ-Իսահմազին, որ յայն աւուրսն աւերելով զԵրեւան, Նախիջևան, նահանգօքն էառ ի ձեռաց (Սմանցւոց. և զկնի եկեալ զօրաց Սուլթան Սուլէյմանին՝ վերստին էառ յետս ի Պարսից:

Բաց ի յայս երկու դրանց արձանագրութեանցն, այլ ուրեք ի պատմութեանց ոչ ելին մեղ ընդ յառաջ, թէ՛ Վուրդ Իշխանաց Իշխան ուստի՞ կայր ՈՒՆԻ ԹԷՎԻՆ (*). զի թէ՛ զՎուրդ Իշխանն Սիւնիքստ ցանկի պատմութեանց, իբր երկրորդ հատորի 401 թղթահամարի՝ լինիլ

(*) Ի 1815 ամէ հետէ Հայազգի ոմն Մկրտն անուն՝ եկեալ աստ ի Տփլիսայ վարէր զճննաւորական կեանս, զամենայն ժամանակս կենացն միաժամ պահելով և ճաշակելով զչորարեկ հաց և ջուր: Եյրս այս՝ որ Մկրտն ճննաւոր կոչուր, ընդ խոտըմբրական կենացն՝ նաև, զցայդ և զցերեկ առաւել պարապէր ի մշակական աշխատսիրութեան: Սա երաց զհիմն սուրբ Յարութեան Տաճարին որ ի գլուխ լերին կղզւոյս, և որ թաղեալ էր ընդ հողով խորագոյն, և ի հիմանէն վերահանգնել կամէր զնոյն եկեղեցի, զոր և կարէր իսկ հայթայթելով, սակայն վախճանն նորա խափանեղ գործոյն: Եւ որպէս զըջապատս սոյն Յարութեան Տաճարին, նոյնպէս և զըջապատս սուրբ

պարտ էր Վուրդ անուն Իշխան Սիւնի, զոր մէք ի նշանակեալ տեղին ոչ գտաք զայդ անուն, թէ՛ և՛ զտանէաք անդ՝ ժամանակաւ յառաջ լինէր, զի անդ Հայոց

Առաքելոց և սուրբ Կարապետ Տաճարացն հարեաց և ընդարձակեաց, զթանձրութիւնս հողոյն և քարին թիկամբն իւրով միայնակ կրկով և հեռացուցանելով ի բաց, որով և ի գլուխ լերինն մեծաւ մասամբ ամբիօնածե յարկարկով տափաբակաւորս, որ յաղմածիգն աշխատանաց է գործ՝ յոր ջանասիրեաց այս այս բարեկատակ և բարեխրատ՝ յընթացս կենաց իւրոց զամս Կիս Սուլթանի և և զիղեցկայարմար շքեղացոյց զղուխ լերինն՝ որ յառաջն լեալ է աւերակ և մացառախոտ, որպէս վկայեն ականատես ծերունիք ի միարանաց անապատիս: Նոյնպէս շինեալ է սա անձամբ անձին ճարտարարուեստութեամբ ի չըջապատ սուրբ Առաքելոց և սուրբ Կարապետ Տաճարացս զբաղմանեակ ընակասման բաղկացեալս ի խրճիթաց և ի սրահից, նաև զփայտածեղուն գաւիթ Առաքելոց Տաճարիս: Ի շինել սորա զայս գաւիթ ի բառնարն զհողն յատակին՝ երեւեալ է ի միջավայրի գաւթին գերեզման սոյն Իշխանաց Իշխան Պ. Բրդին, որ ծածկեալ կայր և էր անյայտ յառաջ սոյն պատմագիր Մանուէլ Վարդապետիմ: Ընա տալանագիրն նորա:

ԱՅՍ Է:

ՀԱՆԳԻՒ

ՍՏ ՊԱՐ-

ՈՆ, ԲՈՒՒ

ԴԴԱՅ:

Վասն ճգնագրեաց առնս այսորիկ Մկրտնայ՝ սոյն Մանուէլ Վարդապետն ի վերջ պատմութեանս, ի յիշել զանուանս ժամանակակից միաբանաց անապատիս՝ զիւն այսպէս: Ի Մկրտն Թիֆլիզցի, բաղմարուեստ, արի և անձանձիր աշխատաւոր, ի շինուածս վանուց հիւանութեան, որմնադրութեան, մոմակազմութեան, և յարակաւ պարտիզարանութեան և խաւարեղինաց անպակաս աշխատաւորութեամբ, բաւականացուցանող ամենեցուն, յետ այսպիսի անգագար աշխատա-

Թիւն ճ' Ա: գրի, իսկ այս Վրդի Թիւն ՈՒԱ: արձանացեալ է:

Նոյնպէս Ղանիկէ և Ներսէսէ պատմութեանցն ոչ պատահեցայ: Ամենախոնարհաբար խնդրեմ՝ զի գտանօղ Հարք, կամ եղբարք զպահասութիւն մեր լցուցեն, որպէս և ի սկզբան սոյն զրուածոյս խնդրեալ եմ:

Գտի Թէպէտ զՍար իս վարդապետ մի Առաջնորդ Աէվանու, յաւուրս Գրիգորի Մագիստրոսի(1044, ՆՂԳ)՝ իմաստասէր և լեզուադէտ, առ որ գրէ Մագիստրոս այսպէս. « Եւ կարօտիմք քեզ մերձենալոյ մեզ յօղնականութիւն այսպիսում իրողութեանց, ապա Թէ ոչ, ազօթիւք օգնեսցես մեզ »:

Եւ և Սարգիս վարդապետ մի Աէվանցի յաւուրս Օգոստինոս Իշխանի (Սպասալարի) վասն քննութեան Սոյ ժողովոյն ընդ այլ Հարց ժողովեալ էին ի Լօռի քաղաք, որք անմիաբանք եղեն ի մջ ժողովոյն. բայց անգանօր ի Լօռու Խաչատուր վարդապետն առաջի մնացեալ բարեմիտ հոգևորականաց և Օգոստինոս Իշխանին երգեաց զհրաշտլին զայն երգ « Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն, և յայնմ օրէ մնաց յամենայն եկեղեցիս մեր զայս խորհրդակաւու երդս երգել ի զգեստաւորել պատարագամատոյց ժամարարսյ: »

Եղեալ է և Արապեա Ապիսկոպոս մի Իջմիածնեցի Առաջնորդ սոյն Աէվանու, փախուցեալ ի Մէլքիսէթ Ասթուղեկոսէ,

նացն յիօմնեակ կարգս ժամերգութեանց անպակաս աղօթաւոր, քաղցրածայն զպիր և անթերի սաղմոսերգու, առ որ ասել զարդ անապատի, ոչ է սխալելի, և իմ հոգեոյս փարելի:

Ե. ԵՂԻԱ ԱՌԴ

յարեցեալ ի Սարգիս Ապիսկոպոս, որ զարգացեալն էր յանապատին Աիւնեաց, և նորոգեալ զայս վանօրայս և զմենաստանըս, զԼիմ և զԱուտուց և զայլ անապատսն, զորս և աստուածահաճոյ կարգադրութեամբ ծաղկեցոյց. յորմէ ուսնալ և Արապեա Ապիսկոպոս, բարեկարգեաց զանապատն Աէվանու:

Որպէս յառաջագոյն խոստովանեալ եմ, վասն ոչ գտանելոյ իմ աստ հնագոյն հեղինակ պատմութեանց, ունիմք յետ և յառաջ սոյթաքել, միջ զիս մեր շուղաց գտցուք: Վանդի ներկոյ հարքն կամէին ցուցանել մեզ Թէ ի Մաշտոց վարդապետ, սկսեալ՝ Բարսեղեան կանոնիւք վարեցեալք են միաբանք Աէվանու մինչև դայժմ, բայց յոյժ բարեգոյն է ասել, յիւրաւի յառաջն Մաշտոցիւ՝ այն Բասիլեան կանոնք ժառեալ են ի Աէվան, սակայն յանցանել ժամանակաց և ի փոփոխել Տէրութեանց և ամայութեանց վանօրէից, ամենայն բարեկարգութիւնք՝ վեր ի վայր տապալեալք և անյայտ մնացեալ էին, մինչև ի (ժամանակս) Սարգիս Ապիսկոպոսի և հեռեւորացն նորա, որ սկիզբն արար ի Աիւնեաց գաւառ ի Մաքենիս կոչեցեալ վանուց, ուր և Մաշտոց վարդապետ զառաջինն անգ էր զարգացեալ և սնեալ:

Եյս Սարգիս Ապիսկոպոս՝ սկիզբն էր առաջնորդ Սաղմոսավանից, ի նոյն գաւառէ Արաղածոտան, ի գեղջէ որ ստիւր Յարենի, մերձ ի Ատրի, որ և մօխանուամբ Պարոն-Տէր կոչուր սոյն Սարգիս Ապիսկոպոս: Հրաշալի պատահմամբ իւրք և ինքն հրաժարեալ յԱռաջնորդութենէ իւրմէ, գնաց ի սուրբ Լւրուսաղէմ. պատահեալ ի ճանապարհի՝ Տրապիզոնի Աիւրա-

կոս անունն Վահանայի միոյ, առն առաքինասիրի, ընկերացեալ միմեանց խորհին՝ ի վերադարձի իւրեանց ի պատշաճ տեղւոջ մենարանս հաստատեալ աթոթեացն ընկերացաբար, ըստ գրութեան Առաքել Պատմչի ԻԱ:

Որք եկեալք ի Սիւնեաց գաւառ հիմնարկեցին զՄատուածահաճոյ բաղձանս իւրեանց. և օր ըստ օրէյաջողի ըստկամաց իւրեանց, եկեալ բազմութեանց հոգևորականաց և աշխարհականաց յարին ի սոսա ջերմեռանդ սիրով. նախ իրի միաբան խորհրդով Սարգիս Ապիսկոպոս և Աիրակոս Վահանայ եօթն զլուխ կանոնական բարեկարգութիւնս սահմանեցին կրօնասիրութեան իւրեանց, որք են այսոքիկ:

Առաջին քան զամենայն, յամենայն հնազանդ ընեն Մատնորդին:

Երկրորդ՝ յամենայն աւուր յայգոյն և յերկոյն զտորհուրդս մօտց և զյանցուածս աւուրն խոստովանել:

Երրորդ՝ ոչ ունիլ ումք առանձին ստացուած ինչ, և ոչ պահել ինչ ի սենեկի, և ոչ ուտել բնաւ անդէն, յանձն արարեալ զամենայն ինսամս՝ նախ Մատուած և ապա Մատնորդն:

Չորրորդ՝ զամն ողջոյն պահօք անցուցանել, բայց յաւուրց կիրարկել և շաբաթու և տէրունական տօնից. իսկ ի մայ և ի զինուոյ իսպառ հրաժարիլ:

Հինգերորդ՝ յաւուրն միանգամ ճաշակել, և հաւատարբաժանել զկերակուրն մեծիւ փոքու, և ընթեռնուլ զգիրս իսեղանի:

Վեցերորդ՝ յամենայն շաբաթս և ի Տէրունական տօնս զղիշերն հսկամբ անցուցանել, և յառաւօտուն անխափան պատարագ մատուցանել:

Եօթներորդ՝ ի հարկանել կոչնակի, ամենեցուն միաբան գնալ յեկեղեցին և ի սեղան, լուութեամբ և խոնարհութեամբ:

Եւ ի վեր քան զամենայն, իբր զլուխ ամենայն կանոնաց եղին զայս, այսինքն է ամենեցուն ջանալ սուրբ պահել զմիտս իւրեանց և ճգնել ի մեռուցումն ախտից, ի խոկումն անտուածային իրաց և յընթերցումն գրոց:

Եղին և կարգ և ձև ի կրօնաւորական սրէմս, զի խանգարեալ էր այն, և յօրինեցին զեկեղեցական զգեստս, ըստ իւրաքանչիւր աստիճանի, և որոշեցին զժամանակ պաշտամանց իւրաքանչիւր ժամակարգութեանց. սահմանեցին և զայլ բազում բարեկարգութիւնս, որովք կառավարին ցայսօր ամենայն կրօնաւորաց վանօրայք Հայաստան աշխարհի, մինչդէ ի Առաւել և ի Վիմ հռչակեալ Անապատքն ևս՝ յընկերաց և ի դաստիարակելոցն ի սոցունց ուսան զկրօնաւորական վարս:

Վանդի Աերսէս Մոկացի, որ մականուամբ Պեղլու կոչիւր, գնաց ի գաւառն Վասպուրսկանի (1622, ՌԱԸ), և մտեալ ի կղզին Վիմ կոչեցեալ, նորոգեաց զվանան, և ժողովեաց անդ զբազմութիւն առաքինի անձանց, և առաջնորդէր նոցա ըստ նախակարգեալ կանոնաց. և ի բազմանալ կրօնաւորաց, անցին և ի Առաւել, ուր և ժողովեցան կրօնաւորք բազումք:

Աոցին նման և Ասրապետ Ապիսկոպոս յետ ամաց ի՝ չեկեալ ի Մեվան կղզի՝ բարեկարգեաց ըստ վերոգրեալ կանոնաց:

Յայտ է թէ՛ Միսիթար Ապիսկոպոս և Բարսեղ վարդապետ և այլք՝ ի սոյն Ասրապետ Ապիսկոպոսէ ուսեալ են զկրօնասիրութիւն (1654 ՌՃԳ), զորս ի վեր

անդր յիշեցաք, և զնորոգութիւն տաճարացն ի Չիթաղեանց յերկց բարեպաշտ եղբարց: Քանզի ժամանակ Ատրապետին յառաջ և մերձաւոր է սոցա, որով հաստատի հեղինակ լինիլ նորա՝ սոցա:

Եւ ի վերայ սցար ամենայնի տարակուսելի մնացին Եթուակարութիւն Տեառն Խորգսի և իշխանութիւն Եղուպ պէկի. վասնզի թուական Եղուպ պէկին Երեւանու սկտսնի ի ՊԶԹ-էն, իսկ արձանագրութիւն հարաւային դրանն է ԶԱԵ և ԼԵ տւելի, որ լինի Ռ.Օ. ուստի եղև մեզ անդիտելի և ապագայ հեռեւորաց տաժանելի: Օ. ի թէպէս պատմիչն՝ միայն զԲարսեղ Եպիսկոպոսն գնէ (պատճառ) վերստին շինութեան, բայց մեք յարձանագրութեանց ի յորմն տաճարաց տեսանեմք, որ Մխիթարն նոյն ժամանակի, Սէվանու անապատի Եպիսկոպոսն է, և Բարսեղն երկրորդ կամ Վէլի (Փոխանորդ) նորին Մխիթարայ, վասնորոյ մեք վասն շինութեան զերկուսն ի միասին գրեցաք:

ԳՒԱՌԻ Ե

Օգոստի պատահումն Բարսեղ վարդապետին Սէվանու:

Բայց զգտի անյաջող զխառած սոյն Բարսեղ վարդապետին աստանօր ուրոյնարար գրեմք առեալ յԱռաքել պատմիչէ (ՌԵ) և ի Չամչեանէ (ԳՏ. 648), որ ասէ այսպէս. «Եւ Բարսեղ վարդապետ Եռաջնորդ Սէվանու՝ արար նորոգութիւն ինչ ի վանս. և ապա պատահեալ աղետալի իմն զխառածոյ՝ մեռաւ: Քանզի ի թուին շայոց ՌՃԹ, յամենան Եպրիլի եղև յայնոսիկ կողմանս անակնուենելի

ցուրտ սաստիկ յոյժ, որով սասեցաւ ծովն Գեղամայ, մինչ բնակչաց կղզւոյն Սէվանայ շրջել համարձակ ի վերայ սառինն. և ի թուլանալ ցրտոյն թուլացաւ փոքր մի և սառնն, որոյ աղագաւ ոչ նաւել կարէին և ոչ ի վերայ սառին շրջել զօրէին, և ի պիտոյից կարեաց պակասեալ տարակուսէին. խորհեցան ապա ջարդել զթուլացեալ սառնն և այնու բանալ ձանապարհ: Սմին իրի Բարսեղ վարդապետ էառ ընդ իւր զԲեղայ մի և զԱրկաւազ մի և զերիս աշխարհականս, և մտեալ վեցեցունց սոցա ի փոքրիկ նաւակ *), սկսան խորտակել զսառն և բանալ ձանապարհ. և ընդ անցանել իւրեանց յառաջ, հատուածք սառինն, որք ի յետուստ մնային, վերստին եկեալ առ միմեանս կցէին: Եւ իրրև հասին նոքա ի կէս ծովուն, սկսաւ շնչել հողմ ուժգին և ցրտագին ի յետ կուսէ. զայն տեսալ նոցա՝ փութացան դառնալ յետս, բայց ոչ կարէին, մի՞ զի հողմն ընդգէմ էր, և երկրորդ՝ զի ձանապարհ նոցա փակեալ էր և ոչ գոյր նոցա զօրութիւն վերստին բանալոյ, ոչ յայսկոյս և ոչ յայնկոյս: Եւ յառաւել ևս սաստկանալ հողմոյն սկսան ձօժալ զնոքօք հատուածք սառինն և յենուլ ի վերայ նաւակին, և վտանգել զնա. և ապա ի յաճախել շարժմանն շրջեցաւ նաւակն, և ծածկեցաւ ի ներքոյ հատուածոց սառինն և սուզաւ ի ծով, յորմէ երկու ոգիք միայն ապրեցան, այսինքն Սարկաւազն և աշխարհական մի, իսկ այլքն հանդերձ Եռաջնորդաւն ընկղմեցան: ,

(*) Փոխանակ ասելոյ զաստ. վասնզի յայնժամ ոչ գոյր նաւ, այլ աստի վարէին, որպէս պատմին միարանքս:

Եյս վերոգրեալ բանք պատճաք՝ զԲարսեղ վարդապետն որպէս Եռաջնորդ ցուցանեն վասն պատահեալ զիպուածոյն, բայց յարմարագոյն է Փոխանորդ կա՛մ վէքիլ ճանաչել որովհետե՛ Խիթարն ըստ ցուցանելոյ արձանագրութեանց, պատուաւոր Ապիսկոպոս և Եռաջնորդ ճանաչել, և զինի անյաջող զիպուածոյ Բարդին, տակաւին Խիթար վարեալ է զԵռաջնորդութիւն իւր ի Աւվան, ըստ վիպութեան աշուժ արձանագրութեան:

Կաւ յաւուրս այս Խիթար Եռաջնոր ի և Երայ Խիթար վարդապետ հեղինակն Վէնետիցեոյ եկալ է ի ման-

կական հասակին (ի Աւվան) յուխտ, ըստ պատմութեան վարուց նորա, և վասն փակեալ աչոյ նորին հրաշիք սուրբ Եռառաժածնի տաճարին Աւվանու լուսաւորելոյն՝ երգեալ է աստ «Մինչ կոյրն էի խնդրեցի, զի ի Աուսեդ լոյս տացի, և այն:

Իսկ Խիթար Ապիսկոպոսն զինի Բարսեղի ծովսկուր լինելոյն, Են բնա վարդապետի վէքիլութեանն, որպէս տեսանի ի միջ ողջունագրի իւրոյ առ Խիթիզումբուզն Իշխանան, վասն յիշատակ տուեալ խանութացն, որ ի միասին ընդ Անդրիսին գրեն զայն զիր՝ վարեալ զման ձիգս զառաջնորդութիւն իւր՝ վախճանի յամի Տեառն : 695, ՌՆԻՒՐ:

(Շարունակել)

